



Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ**

Գ. Ծովինար

15.02.2012

Նախագահում է համայնքի ղեկավար Մ. Մարտոյանը, մասնակցում են համայնքի 233 բնակիչներ:

Ընդհանուր ժողովին մասնակցում են մարզպետարանի աշխատակազմի Հ.Գ.Մ.Տ.Գ.Հ բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ղազարյանը:

Օրակարգում՝

1. 2011թ գյուղապետարանի կատարված աշխատանքների հաշվետվության մասին / Չեկ Մ. Մարտոյանի համայնքի ղեկավար/

2. Այլ հարցեր.

Չեկուցում նշվեց որ 2011թ-ին գյուղապետարանը կատարել է զգալի աշխատանքներ համայնքին հուզող կարեւոր հարցեր լուծելու համար:

1. Համայնքի 2011թ-ի բյուջեն չնայած մի շարք դժվարությունների կատարվել է 89,5%

2. Կոմունալ տնտեսության եւ բարեկարգման բնագավառում վերանորոգվել է խմելու ջրագծերի առավել վտանգավոր, վթարային հատվածները շուրջ 320մ երկարությամբ:

2.1 «Քարաչայիր» կոչվող հատվածում կառուցվել է խմելու ջրի մեկ ջրահավաք ամբար

«Կնեյ կռամ» հատվածում կառուցվել է մեկ մարման հոր եւ 300մ նոր ջրագիծ, որի արդյունքում համայնքի 2-րդ թաղամասը ամբողջությամբ ապահովված է շուրջօրյա խմելու ջրով:

Կառուցվել են անհատական ջրագծեր սոցիալապես անապահով ընտանիքների համար

2.2 Ժամանակի կատարվել է ՕԶԿ-մաքրման եւ քլորացման աշխատանքները ինչի արդյունքում 2011թ համայնքում խմելու ջրի որակի շեղում չի արձանագրվել:

2.3 Կատարվել է բնակավայրի բարեկարգում եւ կանաչապատում, գերեզմանոցում եւ ճանապարհի եզրերին 950 տնկի է տնկվել եւ կառուցվել է ոռոգման ցանց ինչի համար ներդրում է կատարվել 5367,0 դրամի չափով:

2.4 Մշտապես կանոնավոր կարգով կատարվում է աղբահանություն, որի համար 2011թ ծախսվել է 930,0 հազար դրամ:

3. Գյուղատնտեսության բնագավառում ՎՆ ժամանակին մաքրվել եւ կարգավորվել է ոռոգման ցանցը եւ մշտական հսկողության տակ է վերցվել ցանցի բնականոն աշխատանքի ապահովումը:

3.1 Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարագային միջոցառումները, ժամանակին կատարվել է կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքները:

3.2 Հացահատիկի բերքահավաքի ժամանակ չնայած համայնքի 3 կոմբայնների եւս 3-ը դրսից հրավիրվեց, ինչի շնորհիվ ժամանակին համայնքում ավարտվեց հացահատիկի բերքահավաքը:

3.3 Միայն 2011թ-ի գարնանը նամայնքի բնակիչների կողմից հերթագրված ազոտական պարարտանյութի քանակը կազմել է 100 տոնա ինչը ամբողջությամբ բերվել է եւ բաշխվել է բնակիչներին:

4. Համայնքում հասարակական կարգի պահպանության բնագավառում կատարվել է զգալի աշխատանքներ՝ բնակիչների կողմից քրեական բնույթի իրավախախտում չի արձանագրվել:

5. Պաշպանության բնագավառում զորակոչը կազմակերպվել է ճիշտ ժամանակին – առանց թերությունների, զորավարժությունների եւ ուսումնավարժական հավաքների ժամանակ բարեխիղճ աշխատանքների եւ պարտականությունների կատարման համար գյուղապետարանի անձնակազմը Մարտունու զինվորական կոմիսարի կողմից արժանացել է պատվոգրի:

6 Սոցիալական բնագավառում 4 մլն. դրամի չափով օգնություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, կերակրող կորցրած ընտանիքներին, պատերազմի վետերաններին:

2զալի աշխատանք է կատարվել սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ (աշխատանքի ապահովում):

Գյուղապետարանի 2011թ.-ի կատարված աշխատանքները գնահատվեց բավարար: Վերջում եղան հարցեր եւ առաջարկություններ, մասնավորապես մշակույթի, սպորտի եւ երիտասարդության դերի բարձրացման մասին, ժողովում բարձրացված հարցերը եւ առաջարկությունները վերցվեց իբրեւ ուղեցույց հետագա գործողության մեջ դնելու համար՝ մասնավորապես կուլտուրայի շենքի վերանորոգում, մանկապարտեզի վերանորոգում, գյուղամիջյան ճանապարհի 600 մ. հատվածի ասֆալտապատում, ոռոգման եւ խմելու ջրի ջրագծերի վերանորոգում:

Համայնքի ղեկավար՝

Մ. Մարտոյան